

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՌՈՐՅԱՆ

ԲԱՑ ԴԱՍ «ՀԱՅԿԱԿԱՆ ԱՎԱՆՂԱԿԱՆ ԽՈՐՀԱՆՈՑ» ԹԵՄԱՅՈՎ

Վերջերս Դոնի Ռոստովի հայ համայնքին կից կիրակնօրյա դպրոցում հերթական բաց դաս էր նվիրված հայկական ավանդական խոհանոցին: Դասը վարում էր դպրոցի պատմության ուսուցչուհի Օմիլինար Սարգսյանը: Միջոցառմանը մասնակից աշակերտները ջանասիրաբար և մեծ ոգևորությամբ էին պատրաստվել դասին: Իրենց մայրիկների, տատիկների օգնությամբ պատրաստել էին հայկական խոհանոցի ճաշատեսակներից, սովորել էին այդ կերակուրների բաղադրատոմսը և պատմությունը:

Օմիլինար Սարգսյանն աշակերտներին և հյուրերին պատմեց հայ մշակույթը բնութագրող ամենագունեղ տարր հանդիսացող հայկական խոհանոցի մասին, ներկայացրեց հայ ժողովրդի ազգային խոհանոցում մեկտեղվող կենցաղավարման բոլոր ավանդույթները: Ուսուցչուհին պատմեց հայկական սեղանի թագուհի թվով տուրմայի, հարիսայի, խաչի, մշոշի, բոզբաշի, դափամայի, խորովածի, բանջարեղենի խորովածի, Գավառի կլոր գա-



թայի, Երևանի գաթայի, փախլավայի և այլ կերակրատեսակների և քաղցրավենիքների ծագման պատմության, պատրաստման առանձնահատկությունների մասին, որոնք զուտ կերակուրներ չեն, նրանցից յուրաքանչյուրն ունեցել է հատուկ ծիսական նշանակություն, որոնցից շատերը պահպանվում են մինչ օրս:

Հայկական խոհանոցի առանձնահատկությունների մասին խոսելիս նա առանձնացրեց այն հանգամանքը, որ հայկական մշակույթում խոհանոցը սերտորեն կապված է հյուրընկալության և հյուրասիրության հետ: Միայն հայերն են, որ իրենց ղիցարանում ունեցել են հյուրասիրության և հյուրընկալության Աստված Վանատուրին: Ասաց, որ հայկական խոհանոցում և հյուրընկալության մեջ աղն ու հացը համարվել են պաշտամունքային առարկաներ: Հնուց ի վեր, երբ արքունական խնջույքներ էին կազմակերպվում, խնջույքը միշտ սկսվում էր աղ ու հացի արարողությամբ: Հյուրերը



և տանտերերը կանգնում էին դեմ դիմաց, այնպես, որ հացը կտրելին խաչաձև: Դա խորհրդանշում էր նրանց բարեկամությունը և այն հույսերը, որոնք նրանք կապում էին բարեկամության հետ:

Հայկական լեռնաշխարհի բնակչիմալական պայմաններն իրենք են թելադրել էր և ինչ ուտել: Ինչպես օրինակ ձմռանը պատրաստվող կերակուրները որպես կանոն հարուստ են ածխաջրերով, սպիտակուցներով և ճարպերով, որոնք օգնում են էներգիա կուտակել: Իսկ ամռանը պատրաստվող կերակուրների մեջ մեծ մասն են կազմում բանջարեղենը և կանաչեղենը: Հայկական խոհանոցն առանձնահատուկ է նաև բազմաթիվ սնունդ հանդիսացող բույսերով, հաշվում են ավելի քան 300 տեսակի ուտելի բույսեր: Պատահական չէ, որ Հայաստան այցելած զբոսաշրջիկներն ու հյուրերը հայկական խոհանոցից ստացած իրենց տպավորությունների հիման վրա Հայաստանը առանձնացնում են աշխարհի մյուս երկրներից:

Կիրակնօրյա դպրոցի ունկնդիր դոնահայ թաղնու Տախտամիշեր դասեր օգնությամբ պատրաստել էր Դոնի հայերի

ԱՌՈՒ ԲԱԲԱԶԱՆՅԱՆ – 100



Մեծանուն կոմպոզիտոր, դաշնակահար, ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Առնո Բաբաջանյանի ծննդյան 100-ամյակի առթիվ հունվարի 22-ին 22 ԿԳՄՍ նախարար Վահրամ Դումանյանը, նախարարի տեղակալ Արա Խզմալյանը, Հայաստանի կոմպոզիտորների միության նախագահ Արամ Սաթյանը, մտավորականների, արվեստագետների, երաժշտասեր հանրության հետ այցելել են Երևանի քաղաքային պանթեոն և հարգանքի տուրք մատուցել կոմպոզիտորի հիշատակին:

Այնուհետև նախարարը գերատեսչության աշխատակիցների, արվեստագետների, բաբաջանյանական արվեստի երկրպագուների հետ կոմպոզիտորի ստեղծագործությունների էլեկտրոնային ներքո ծաղիկներ է խոնարհել Առնո Բաբաջանյանի արձանի մոտ:

«Այսօր մենք տոնում ենք մեր մեծանուն կոմպոզիտորի Առնո Բաբաջանյանի ծննդյան 100-ամյակը: Դժվար է նոր խոսք ասել Առնո Բաբաջանյանի մասին, քանի որ ժամանակը վաղուց է տվել նրա գնահատականը, և ինքը ժողովուրդն էր ծնունդ տալիս նրա արվեստին: Բաբաջանյանը մեր սերնդի համար եղել է ու կա որպես կենսագրություն: Մեր երիտասարդությունը, հիշողությունները, ապրումներն այս կամ այն չափով առնչվում ու զուգորդվում են նրա արվեստին: Կոմպոզիտորի ստեղծագործությունները վերածվել են լավատեսության, սիրո, քաղաքային կյանքի խորհրդանիշերի: Դժվար է, օրինակ, պատկերացնել Երևանն առանց Բաբաջանյանի «Առաջին սիրո երգը» և «Երևան» ստեղծագործությունների», — նշել է նախարարը ու հավելել, որ մեր ղովարին օրերում Բաբաջանյանի արվեստը պետք է հնչի ամենուր և ավելի մեծ ուժով վերականգնելու համար մեր լավատեսությունը, ապրելու և արարելու մեր կամքը:

Վահրամ Դումանյանը տեղեկացրել է, որ ձևավորվում է Առնո Բաբաջանյանի հորեյանական միջոցառումները համակարգող կառավարական հանձնաժողով, որի նպատակն է պատշաճ տոնել կոմպոզիտորի հորեյանը, նոր շունչ հաղորդել նրա արվեստի տարածմանը Հայաստանում և արտասահմանում:

Առնո Բաբաջանյանի մեծարման և գնահատանքի խոսքով հանդես են եկել Արամ Սաթյանը, կոմպոզիտոր Մարտին Վարդապետյանը և այլք: Հանդիսության ընթացքում կոմպոզիտորի որդին՝ Արա Բաբաջանյանը, տեսաուղերձով ողջունել է մասնակիցներին և կարևորել պետական մակարդակով անվանի արվեստագետի հորեյանին նվիրված միջոցառումների անցկացումը: Հորեյանական օրվա առիթով Առնո Բաբաջանյանի արձանի հարակից տարածքում հնչել են կոմպոզիտորի «Վոկալիքը» (Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի մենեդջուրի Արթուրյանի ղեկավարությամբ, նվագակցող Արմեն Աղաջանյան), «Նոկտյուրնը» («Մեկնարկ» տաղանդի զարգացման նպատակային ծրագրի միջազգային մրցույթների դափնեկիր, դաշնակահար Արմեն Պուչիյան), «Մեղեդի» («Մեկնարկ» տաղանդի զարգացման նպատակային ծրագրի միջազգային մրցույթների դափնեկիր, դաշնակահար Արթուր Գրիգորյան), «Երախտապարտ եմ քեզ» («Ճարգարս տեբյ») երգի մշակումը (ՀՀ վաստակավոր արտիստ, դաշնակահար Արմեն Բաբախանյան):

Արմենյան

Արմինե ՀՈՎՍԵՓՅԱՆ